



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018թ.

Արման Գասպարյանին

Ք. Երևան, Ավան, Թումանյան թղմ, 6/3 շենք, բն. 12

(arman.gasparyan@kuleuven.be)

Ձեր՝ 02.10.2018թ. առցանց դիմումին.

Համայնքային բյուջեներից կրթության և տրանսպորտի/ճանապարհ/ ոլորտում 2014թ. կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ՝

- 2014թ. մարզպետարանի միջոցով պետական բյուջեից կրթության ոլորտի կազմակերպությունների պահպանման համար հատկացված ծախսը կազմել 6230516.0 հազ. դրամ, որից՝

Հանրակրթական ուսուցում՝ 5881762.6 հազ. դրամ

Հատուկ կրթություն՝ 109017.7 հազ. դրամ

Ներառական կրթություն՝ 166395.9 հազ. դրամ

Նախադպրոցական կրթություն՝ 36756.8 հազ. դրամ

Այլ ծրագրեր՝ 36583.0

Նշված գումարները տրվել են մարզպետարանի ենթակայության տակ գործող կրթական հաստատություններին / համայնքներում գործող դպրոցներ/:

- Մարզային, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների պահպանման համար պետական բյուջեի միջոցներից կատարվել են հետևյալ ծախսերը՝

Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ պահպանում և շահագործում՝ 69043.7 հազ.դրամ

Քարաբերդ համայնքի կամուրջի վերանորոգում՝ 3342.7 հազ. դրամ

Համայնքային բյուջեներից կրթության և տրանսպորտի/ճանապարհ/ ոլորտում 2014 թ. կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող են դիմել համայնքներին:

Կրթության ոլորտին վերաբերող 2014թ. վիճակագրական տվյալները տեղադրված են Լոռու մարզպետարանի (<http://ori.mtad.am/files/docs/12776.pdf>) և ՀՀ վիճակագրական կոմիտեի (armstat.am) պաշտոնական կայքերում:

Ճանապարհաշինության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկացնում են, որ համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

Համայնքների մակարդակով 2014 թվականի դրությամբ մարզում լավ գնահատական ունեցող մարզային /տեղական/ նշանակության ա/ճանապարհների երկարությունը կազմում էր 46.4 կմ, բավարար՝ 145.0 կմ, վատ վիճակի՝ 216.5 կմ:

2014 թվականին իրականացվել են մի շարք տեղական և ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներ: Ընդհանուր արժեքը կազմել է 1258.0 մլն դրամ, որից 506.0 մլն դրամը Լոռու մարզպետարանին հատկացված միջոցներով, 752.0 մլն դրամը՝ Տրանսպորտի և կապի նախարարության ֆինանսավորումով: Արդյունքում վերանորոգվել են Մ6-Թեղուտ տեղական և Թեղուտ համայնքի ներհամայնքային նշանակության ճանապարհները, արժեքը՝ 698.0 մլն դրամ, Լոռու մարզպետարանին հատկացված միջոցներով Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Հոբարձի, Բազում, Գյուլագարակ, Թումանյան համայնքների ներհամայնքային ճանապարհները, կատարվել է Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԽԱՂԱՏՐՅԱՆ